



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՅՆՕՐԷՆ-ԵՄԲԱԳԻՐ
ՋԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 16 ԱՊՐԻԼ 1911

ԲԻՒ 14

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆ. ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ. — Զատիկ
Ս. ԳԻՐԳԷՆ ՅՈՒՔԵՐ. — Անհաւատութիւն Թովմայի
Սըտին ծարաւը
Հայ կինը հինգերորդ եւ քսաներորդ դարերուն
Եպիսկոպոսական ձեռնադրութիւնը Ստոյ
մայրավանքին մէջ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան կարեւոր լուրեր

ԲԱԲԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԵՐԷՅ
ԳԷՈՐԳ Ծ. Վ. ԱՍԼԱՅԵԱՆ
ԽԱՋԻԿ ԽԱՆ ՍԱՐԱՃԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՔԶՆ. ԵՐԵՒԱՆԵԱՆ



Տպագր. Ց. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ
Սոփրան-Համալ Մօլա-Թաշը, Թիւ 16
Կ. ՊՈԼԻՍ

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հինգ լավանդարի իրաւունք ունի մէկ թերթ ձրի անոնալու

ԲԱՍՄԱՆԴԱՆԵՐԸ ԿԱՆԹՈՆԵՆ
ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ ԿՐԹՈՒԹԻՒՆԻ ԴԻՐԱՄԱՍՏՈՒԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԲԱՍՄԱՆԴԱՆԵՐԸ ԿԱՆԹՈՆԵՆ

Պոլսոյ եւ Գաւառացի տարեկան	40 դրոս
Արսասահմանի համար	» 10 ծրանգ
Ռուսիայ	» 4 ռուբլի
Ամերիկայ	» 2 solur
Ձեռքէ կը ծախուի պարսկ	40 փարա

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է ղրկուի առ Զարմար Բանանայ կեդիւրեան, Կ. Պոլիս, Պեթիկքաւ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمي كل ساسنم «دا جا» غن تسي مديري باباس زارماير افندي
Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

ՄԱՐՍԵ. — Տ. Հմայեակ Բհնյ. վարժապետեան

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջին. Փոխաւ

ՆԻՊՈՍԻԴՈՍ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպեան

Դորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան

Շ. ԿԱՐԱՊԵՏ. — Տ. Նաթան Բհնյ. Տանեան

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Դա

ՈՒՇԱՔ. — Կարնապետ էֆ. Բէհեանեան

ԱՊԵՐՈՒՊ. — Առաջին. Փոխաւորդ Տ. Պո

ՊԱՍՏԱՆ. — Ս. Սարգիս Բհնյ. Սարգիսեան

Ս. Վրդ. Դաշիթեան

ՊԱՏԱՆ. — Ս. Սարգիս Բհնյ. Սարգիսեան

ԱՅԼԹԱՊ. — Տ. Դարեգին Բհնյ. Պողար

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

եան

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

ԱՅԻՕՆ ԳՍՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

Ա. ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

ԲԱՐՏԵՐԴ. — Մ. Սանստեան էֆ. Սանստեան

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

ԴԱՂԱՏԻՍ. — Առաջինորդ Տ. Բարդէս Եպս.

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

ԿԵՂԵՔԵԱՆ

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

գիւսեան

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

ՍԱՄՍՈՆ. — Ս. Սարգիս Բհնյ. Սարգիսեան

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

ԵՐԶՆԿԱ. — Տ. Մեարոպ Բհնյ. Թորոսեան

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

ԶՄԻՒՆԻՒՍ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

Սարգսեան

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Դաւուստ Բհնյ. Տ.

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

Դաւուստեան

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

ԿԱՐԻՆ. — Առաջինորդ Տ. Սմբատ Եպիսկ.

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

Սաատէթեան

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

ԿԻՐԱՍՈՆ. — Մաթթիէ էֆ. Սարգիսեան

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

ԿԻՒՄԻՒԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Բհնյ. Դերձակեան

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.

Նշանեան

ՍԱՄՍՈՆ. — Առաջինորդ Տ. Սահակ Ե. Վ.



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 16 ԱՊՐԻԼ 1911

ԹԻԻ 14

Կրօնական խորհրդածութիւններ

Զ Ա Տ Ի Կ

«Այս քն կամք Հօր իմոյ որ առաքեացն զիս զի զամենայն զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից ի նմանէ, այլ յարուցից զնա յաւուրն յետնում» (ՅՈՎՀ. Զ. 39:)

Զատկի խրախճանքներն ու ցնծումները, բնութեան գարնանային վերածննդեան ու վերանորոգութեան հետ, եթէ մէկ կողմէն կը փարատեն կեանքի ամօպերն ու թախիծը քրիստոնեայ ճակատներէն, միւս կողմէ կ'արտայայտին կեանքի խորհուրդը, ապրելու նշանակութիւնը:

Տօն մը, հանդէս մը, թափօր մը, եւն. միշտ լա՛ւ հասկցուած իրողութեան մը հանդիսաւոր հոչակումն է. ընկերարանական երեւոյթի մը յայտնութիւնն է, որ առաջ կուգայ ստոյգ պատճառէ մը:

Քրիստոսի ՅԱՐՈՒԹԵԱՆ տօնը, հայեանակ բառով Զատիկը, ուրեմն, ի՞նչպիսի իրողութեան մը հանդիսաւոր հոչակումն է եւ ո՞ր ստոյգ պատճառի մը յայտնութիւնը: — Կ'ուզենք այս տեսակէտով ընել մեր խորհրդածութիւններն այսօր՝ Քրիստոսի Յարութեան տօնախմբութեան առթիւ:

Եւ կը խորհրդամբ կեանքը ստոյգ, հաս-

տատուն նշանակութիւն մը ունի: Հակառակ երբայական իմաստութեան յայտարարութեան՝ ոչ խոտ է մարգուն կեանքը, ոչ ալ ունայնութիւն. այլ իրողութիւն մը, որուն արժէքին մեծութեան եւ բարձրութեան ամէն օր կը վկայեն մեր գործերը, մեր աշխատութիւններն ու տոսապանքները, մեր հաճոյքներն ու ծրագիրները, եթէ նոյն իսկ մըտածութեամբ եւ խօսքով մենք բոլորովին հակառակը ապացուցանէինք մեր գործերուն: Անոնք որ կեանքի համար խոտ եւ ունայնութիւն ըսին, յաիրացած էին ջրղային հաճոյքներէ. այսինքն չափէն աւելի խորասուզուած էին կեանքի մէկ կողմին, կիրքին եւ կարիքին մէջ. զեղծանած էին, չարաչար գործածած էին իրենց կենսատու զօրութիւնը, եւ երբ օր մը յոգնեցան, չկրցան վայելիլ այս հաճոյքը, ըսին:—Ամէն բան ոչնչութիւն, ունայնութիւն է այս աշխարհի մէջ, մարդկային կեանքը խոտի

պէս է, այսօր կայ, վաղը չկայ: Ուրիշներն, ալ միեւնոյն սկզբունքով, անձնատուր եղան հաճոյքի, ֆէյֆի կեանքին, բասին բնախօսական բովանդակ նշանակութեամբ. քանի որ այսօր կանք եւ վաղը չկանք, հարկ է այս կարճ միջոցը ապրիլ, եւ վայելել ինչ որ հեշտալի է. կե՛ր. արք եւ ուրախ չե՛ր:

Տարակոյս չկայ որ կեանքի այս կէրպ ըմբռնումը, կեանքի արժէքին վրայ այսպիսի վարդապետութիւն մը՝ շատ հաճելի էր մարդկութեան. վառն զի ան կը շօշօփէր ուղղակի մարդուն հաճոյքի կեանքը, այսինքն մարդու մէջ ամէնէն շուտ արթնացող եւ տղէտին ու գիտունին մէջ հաւասար կերպով արտայայտուող կեանքը, եւ կը քաջալերէր զայն: Ա՛լ ժառանգական ախտ մը եղաւ մարդու համար ապրիլ հաճոյքի կեանքը ու այդ կեանքին վարդապետութիւնը կամ փիլիսոփայութիւնը: Այս այսպէս է, ո՛րչափ ալ մարդիկ ուզեն կեղծել: Շատոնց է որ կեանքի հաճոյքի կողմը՝ միայն հաճոյքի համար, կիրքի անգուսպ արշաւանքին մէջ կը վնասուի, մինչ ատիկա բնական, օրինական, արդար հաճոյքը պիտի ըլլար պարզապէս սերնդագործութեան, ինչպէս որ կը վարդապետէր երբեմն Տեալալան կեանքի Դպրոցը:

Հին եւ հիմակուան դարերու մէջ կեանքին արժէքը ի՛նչպէս ալ մեկնուած եւ գնահատուած ըլլայ, իրողութիւնը սա՛ է, որ մարդիկ կեանքին ստոյգ նշանակութիւնը տեսականօրէն կը ժխտեն, իսկ գործնականօրէն կը հաստատեն: Ապրիլու տենչանքը բո՛ւն է մարդուն ներսը, բոլորովին բնական է. մարդ չուզեր մեռնիլ, բայց կը մեռնի: Մահը բնական է, բայց մարդ երկա՛ր, երկա՛ր ապրելու էր մեռնելէ առաջ. վասն զի իր ստեղծման պայմանները երկար կեանք մը կ'ապահովեն: Վաղհաս մահը, շուտ մեռնիլը, բնական չէ, բնական է: Կեանքի սխալ հասկըցողութեամբ եւ սխալ գործածութեամբ՝ մարդիկ կարճեցին իրենց կեանքը: Եւ ես կ'ըսեմ որ գեռ այսպիսի կտրուած, ախտաւորուած կեանք մը մեծ արժէք ունի,

եւ մարդիկ իրենց ամէնօրեայ գործերով կը հաստատեն, թէ կտրուածէն աւելի մեծ եւ միանգամայն իրակա՛ն է այդ արժէքը:

Պէտք է խոստովանիլ որ կեանքին այդ արժէքը Քրիստոս բացարձակ կերպով լաւ գնահատած է: Ես չեմ յիշեր կրօնական եւ փիլիսոփայական գրութիւններու ու եւ հիմնադիր, որ Քրիստոսի նման բացէ ի բաց յայտարարուած ըլլայ մարդկութեան, թէ զաւննայն զոր ետ ցիս հայր՝ ոչ կորուսից ի նմանէ: Կեանքը թանկագին է, ան պէտք չէ որ կորսուի: Քրիստոնէութեան հիմնաքարն է այս յայտնութիւնը, որուն վրայ շինուած է մարդկային կեանքի անկորուստ պահպանութեան վարդապետութիւնը, որուն անշուշտ աւելի փառաւոր մէկ յայտնութիւնն է ՅԱՐՈՒԹԵԱՆ վարդապետութիւնը: Այսպիսի ապահովութիւն մը ոչ մէկ փիլիսոփայութիւն կրցած է տալ մարդկութեան:

Կը խնդրեմ որ ընթերցողներս լրջութեամբ վերլուծեն բնաբանիս մէջ յայտնուած միտքը: Քրիստոս աշխարհ եկած է գործադրելու համար ԿԱՄՔ ՄԸ. այդ ԿԱՄՔԸ աստուածային է, այդ ԿԱՄՔԸ կ'ուզէ որ մարդիկ չկորսուին՝ ոչ կեանքի մէջ, ոչ ալ մահէն ետքը: Քրիստոսի բովանդակ գործունէութիւնը կեդրոնացած է այս ԿԱՄՔին գործունէութեան վրայ: Եւ Աւետարանի պատմութիւնը կը հաստատէ, թէ Քրիստոս կորուսածները փրկուեց միշտ, վերապրեցունելու համար զանոնք: Կեանքի ազնուայման մասին բացատրած իր սկզբունքները, ախտաժէտ մարմիններու իր հպումները, ինկած, ապականած կեանքերու մաքրութեան եւ վերականգնումին համար իր ձեռնտուութիւնները, մահուան անկողիններու վրայ իր սփռած կենդանութեան ճառագայթները, այո՛, այս բոլոր իրողութիւնները կը հաստատեն, թէ Քրիստոսի վերաբերումը կեանքի մասին, միտքերու եւ սիրտերու մէջ յեղտփոխութիւն մը պէտք է արծարծէր, եւ այդ յեղափոխութիւնը պիտի հաստատէր իր կարգին սա՛ ճշմարտութիւնը, թէ Բնութեան մեջ բան մը չկոր-

սուիր, հետևաբար պէ՛տք է որ կորսուե՛ր մարդն ալ:

Գիտէ՞ք փորձով, թէ ծանր են կորուստները, ինչ ալ ըլլան առո՞նք: Այդպէ՛տ է՞: Զեր կեանքին մէջ կրած չէ՞ք ցաւը, վիշտը, սուգը ո՛ր է կորուստի, այդ կորուստը նիւթական ըլլայ թէ բարոյական: Սիրուած առարկայ մը, փայտաշուած կենդանի մը, մաքուր վարկ մը, պատիւ մը, եւայլն, եւայլն, ասոնցմէ ո՛ր է մէկուն կորուստը, փճացումը կը վշտացնէ կորուստին տէրը, կը սեւցնէ անոր օրերը: Հապա ի՞նչ պիտի ըսէինք նոյն իսկ Բնութեան անյիղի մէկ օրէնքին: Բնագիտութեան պարզ դասընթացք մը տեսած սեւ է ուսանող ալ շատ դիւրութեամբ պիտի բացատրէր ձեզի, թէ անուխի կտոր մը, որ կրակ կ'ըլլայ, կը մոխրանայ եւ կը կորսուի հաստրակ աչքերու համար, երբէք չկորսուիր: Բնութեան մէջ կորուստ չկայ, ձեւափոխութիւն կայ, պիտի ըսէր:

Անշուշտ այս օրէնքին աւելի լայն ըմբռնումը, աւելի փառսուոր մէկ կիրարկումը պէտք է տեսնենք Քրիստոսի խօսքերուն եւ իր յարութեան յիշատակին մէջ: Եթէ Բնութեան մէջ բան մը չկորսուիր, ինչո՞ւ ուրեմն կորսուէր բնութեան իշխանը, մարդը, մարդու կեանքը, այդ մարդը արժեցնող բնածին զօրութիւնը: Անուխի կտոր մը եթէ ձեւ փոխէ միայն՝ իր պաշտօնը կատարելէ ետքը, ինչո՞ւ բան մը չգիտնայինք թէ ի՞նչ պիտի ըլլար մեռնող մարդուն փոփոխութիւնը:

Ասոնք խնդիրներ են, որոնց վրայ մարդիկ, —մասնաւորապէ՛ս Աւետարանով լուսաւորուած մարդիկ,—պէտք է խորհին, եւ ես վստահ եմ, որ լուրջ խորհողութեան մը արդիւնքը հիանալի պիտի ըլլար իւրաքանչիւր խորհողին եւ վերլուծողին համար, եւ անոնք ինքնին պիտի զգային մաքուր կեանք մը ապրելու պէտքը: Մաքուր կեանք մը, արդարապէ՛ս կառավարուած, օրինապէս ուղղուած գէպի իր նւապատակը:

Քրիստոսի ՅԱՐՈՒԹԵԱՆ Զատիկը պարտք կը դնէ ամէն քրիստոնէի վրայ,

որպէս զի ըմբռնեն թէ տօնական խանդավառութիւնները՝ անկորուստ կեանքի փառարանութիւններն են, մարդկային կեանքի մշտնջենաւորութեան եւ անապահակութեան հռչակումներն են գերեզմանէն ասդին եւ անդին:

Կ'արժէ մասնաւորապէ՛ս, որ մեր ազգը եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ սիրելի զաւակները, չկորսնցնէին մաքուր եւ կենսատու սկզբունքներ իւրացնելու վարժութիւնը, հսկելու համար կեանքի ստոյգ նշանակութեան վրայ: Կը չեշտեմ, որ ասիկա մասնաւորապէ՛ս անհրաժեշտ է մեր ազգին համար, որ կ'ուզէ ապրիլ: Աղգիւրը եւ ցեղերը աղնուացնող, ուժաւորող, քաղաքակրթող սկզբունքներ եւ վարդապետութիւններ ընտանի պէտք է ըլլան միշտ: Մեր ցեղին ոյժը, կենդանութեան կեդրոնը պէտք է փնտռել մաքուր կեանքի մէջ, որ պիտի ապրեցնէ ղինքը, պիտի պահէ զինքը կորուստներէ, վաղհաս մահացումներէ, յաւիտենապէս տեւող, ապրող, ճառագայթող ազգային կեանքի մը ապահովութեամբ:

Հին Եգիպտացիներու խորունկ մշակութիւնը կեանքի իմաստութեան, սրճափ ալ տարօրինակ եղած ըլլար իրենց փիլիսոփայութիւնը այս մասին, հիացուցած է զիս, եւ ամէն անգամ որ առիթ ունենամ հոգեբանական իրերու վրայ անդրադառնալու, չեմ քաշուիր հիանալէ անոնց զիս պահութեան, մոմիայի արուեստին վրայ: Այդ անփուտ մարմինները կ'ըսեն թէ կեանքը թանկագին է, կեանքը անմահ է. այս զօրութիւնը, կենդանութիւնը, անմեռ է, անկորնչելի է: Հոգւոյ անմահութեան այս գիտակցութիւնն էր, որ Եգիպտացիներուն հնարել տուաւ մարմինը անփուտ պահելու արուեստը, որուն գաղտնիքին չէ կըրճած թափանցել դեռ՝ ամէն դարու եւ ժամանակի գերազանց, իր հըրաշալի գիտութիւններով ու գիւտերով պանծալի այս քսաներորդ դարը:

Պէտքը հնարամիտ կ'ընէ մարդը: Ծըշմարտութիւն մըն է ասի: Մեր ազգը ո՞րչափ լաւ զգայ իր գոյութեան պէտքը, իր ազգային կեանքի արժէքը, այնչափ կ'ու-

ժառորուի իր հնարամտութիւնը, այնքան լաւ եւ զիւրին կը թափանցէ իր կեանքին ազնուացման պայմաններուն, այնքան դիտակցութեամբ կը գնահատէ անկորնչելիութիւնը իր կեանքին:

Հայուն Ջատիկը, իր կրօնական բոլոր պարզութեամբ եւ մաքրութեամբ, իր սրբազան երգերու շնորհալի արտայայտութեամբ եւ իր աւանդական կարմիր-հաւ կիթներով, կեանքին խորհուրդը կը բացատրէ, առիթ կ'ընծայէ մեզի ուշադրութիւն դարձնելու Քրիստոսի գործադրած ԿԱՄՔԻ նշանակութեան վրայ, վերջապէս կը սորվեցնէ մեզի թէ ՅԱՐՈՒԹԵԱՆ տօնը՝ հոշակունի է անկորուստ կեանքի մաքուր տեւականութեան, անկախ եւ ազատ գեղամանային ապականութիւններէ:

Ահա թէ ինչպէս եւ կը փափաքէի, որ Ջատիկը տօնախմբուէր մեր անհատական եւ մեր ազգային կեանքի գիտակցութեան մէջ:

Մեր Կրօնական Խորհրդածուրդի անդամները եւ զիւրքեր ԵՐԶԱՆԻԿ ԿԵԱՆՔՈՎ զրինք, եւ պատշաճ է որ այդպէս ալ փակենք մեր խորհրդածութիւններու շարքը:

Լաւ ճանչնալ կեանքի նշանակութիւնը, կը նշանակէ ապրիլ երջանիկ կեանքը:

Քրիստոսի ՅԱՐՈՒԹԵԱՆ Ջատիկը կուգայ անգամ մըն ալ յիշեցնել մեզի այդ ճշմարտութիւնը: Քրիստոսի, որ իր մահով կոխտեց մահը եւ իր յարութեամբ կեանք պարգեւեց մարդկութեան, երջանիկ կեանքը, նմա փառք յաւիտեանս: Ամէն:

ԲԱՅԱԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ս.ԳՐԻԳԷՆ ՅՈՒՐԵՐ

ԱՆՃԱԽԱՏՈՒԹԻՒՆ ԹՈՎԱՄԱՅԻ

Յովն. Թ. 24—29

Կան անուանական Քրիստոնեաներ, որոնք յաճախ մինչեւ անկրօնութիւն յառաջ կ'երթան՝ երբ ինչիւրը քրիստոնէական վարդապետութեան եւ հաւատալեաց վրայ է, մահաւանդ Քրիստոսի փառաւոր Յարութեան վրայ: Անոնք չեն քաշուիր ըսելու թէ՛ այն մեծ զէպքին ահա-

նատես վկայ եղող առաքեալք տկար հոգիներու, զիւրահաւան բնութեան տէր եւ ամէն սնապաշտութեան յարող մարդեր էին: Կը յարձակին անոնց (առաքելոց) իմացական ուժին վրայ, տկարացնելու համար անոնց վկայութեան հեղինակութիւնը:

Իրողութիւնք կը բողոքեն սակայն այս կարծեաց դէմ: Նայեցէ՛ք Թովմասին: Անտարակոյս սա չէր մշակուած մտքով բարձր մարդ մը, համալսարանական մը՝ որ խղճի մտօք ըլլած ըլլայ ամէն խնդրոց շրջանը, որ ինքնիրեն հարցուցած ըլլայ հետաքրքրութեամբ, թէ հրաշք կարելի՞ է թէ ո՛չ, թէ Աստուած բաւական մեծ է սքանչելիքներ ընելու համար. կամ թէ Նա կ'իշխէ՞ տիեզերքին օրէնքով՝ ինչպէս յետին մարդը: Ո՛չ, Թովմաս ժողովուրդի մարդ մըն է, առանց շատ գիտութեան եւ բարձր ուսման, բայց պարզ եւ ուղիղ մարդ մը, խիստ ողջամիտ, քիչ մը սկեպտիկ, մին այն մարդոցմէն՝ որոնք չեն սիրեր ցնորքներ, չեն սիրեր հրաշքներ, որոնք չեն յանձներ ինքզինքնին ամբոխներու դիւրահաւանութեան, որոնք պէտք ունին տեսնելու եւ շօշափելու ինքզինքնին յայտնի կամ ճշմարիտ քանի մը տալէ առաջ. դրական հոգիներ՝ որոնք յոյժ կը զարհուրին աւելնի կամ խանդի յափշտակութիւններէ, քանի մը ծեր կ'լինելու, քանի մը ցնորած ուղեղներու եւ ջլախտաւորներու վկայութեան վրայ շրջաբերութեան հանուած սնապաշտական առաժնեքէ:

Առաքեալները կը պատմեն Թովմայի թէ իրենք տեսան զՔրիստոս, խօսեցան իրեն հետ, եւ քանի մը ժամ վայելեցին իր ընկերութիւնը: Անոնք զայս կ'ընեն (կը պատմեն) յուզմամբ եւ ուրախութեամբ: Ասի զէպք մըն է, որ զիրենք կը մխիթարէ եւ կը լեցնէ յուսով: Բայց Թովմաս՝ հեռի՛ է իր սրտին առաջին տըպաւորութեան տեղի տալէ, եւ հաւատալէ պատմութեան մը որ իրեն հաստատուեցաւ տասը մարդոց վկայութեամբ, իր կասկածոտ բնաւորութեան տեղի տալով, իսկոյն կը պատասխանէ:

—Թէ որ ձեռքերուն մէջ բեւեռներուն նշանը չտեսնեմ, եւ մասս բեւեռներուն տեղը չխոթեմ եւ իմ ձեռքս անոր կողը չխոթեմ, չեմ հաւատար :

Կրնամ ցոյց տալ ասկէ աւելի մեծ եւ խիստ պահանջուած մը : Ո՛չ միայն նա կ'ուզէ տեսնել բեւեռներուն նշանը, այլ եւ, թերեւս իր աչքերը կարենային զինքը խաբել, կ'ուզէ մատը խոթել բեւեռներուն նշաններուն մէջ : Կ'ուզէ վստահ ըլլալ մանրագին քննութեամբ մը Բրիտտոսի յարուցեալ անձին : Կ'ուզէ ստուգել ամէն վէրքի նշանները, չօչափել մէն մի վէրքը : Չուզեր բնաւ զիջանիլ, առանց բռնադատուելու անդիմադրելի ճշմարտութենէ մը :

Յանձին այս կասկածոտ առաքեալին, չէ՞ք ճանչնար ձեր պատկերը, ո՛վ դուք, որ կ'ուզէք կարեւորութիւն տալ միայն ա՛յն հրաշքներուն որոնք խստիւ վերաքննուած են :

Թովմաս չէ բնաւ վարանոտ իր համոզման մէջ. նա կը մերժէ հաւատալու, նա չուզեր ուրիշի աչքով տեսնել. այլ կ'ուզէ բո՛ւն իսկ ի՛ր աչքով տեսնել, նա չի զիջանիլ տեղի տալու, եթէ չօչափէ իր ձեռքով Փրկչին խոցերը :

Եւ դուք կ'ուզէք՝ որ ա՛յսքան ցուրտ, այսքան բարակը մտածող, ա՛յսքան պահանջկոտ մարդը տեղի տուած ըլլայ տեսիլքի մը : Եւ դուք կ'ուզէք՝ որ նոյնպէս ինքը կուրացած երկնային աւիւնով, միւս առաքեալներու անխորհուրդ եռանդով տեսած ըլլայ յանկարծ իր աչքերուն առջեւ մտացածին երեւոյթ մը, իրր թէ գտնուած ըլլար ձեռնածուի մը սենեկին մէջ : Եւ դուք կ'ուզէք որ ի քթիկ աւան, մէկ երկվայրկեանի մէջ, այնքան հանդարտ, եւ իր ընկերակցաց պատմութենէն ա՛յնքան նուազ յուզեալ մարդը՝ հաւատացած ըլլայ լսելու ձայնը եւ տեսնելու իր առջեւ կանգուն Բրիտտոսի Օգոստափառ Անձը, հանդերձ իր վէրքերու թարմ սպիներով :

Այս երեւոյթը պիտի ըլլար ա՛լ աւելի նորօրինակ, քան յարութեան հրաշքը : Ես աւելի դիւրաւ կը հաւատամ ա՛յս հր-

աշքին, քան այն յանկարծական տակնուվրայութեան՝ որ պիտի ծնանէր պաղարիւն եւ կասկածոտ խառնուածք ունեցող մարդու մը հոգւոյն մէջ :

Սակայն եթէ հրաշքը տեղի ունեցաւ, եթէ Բրիտտոս ճշմարտապէս ինքզինքը ցոյց տուաւ Թովմասին, հաստատուու համար թէ նոյն ինքն է միահեծան Տէրն՝ Որմէ չեն վրիպիր սրտի ծածուկ խորհուրդները, եւ ըսելով անոր. —Մատու հոս բեր, եւ նայէ՛ իմ ձեռքերս, ու բեր քու ձեռքդ եւ իմ կողս խօթէ, ու մի՛ ըլլար անհաւատ, հապա հաւատացեալ. Եթէ, կ'ըսեմ, Բրիտտոս թողուց իր անձը մտադիւր քննութեան մը, սա չէ միայն Թովմաս, որ է մի վկայ ապահով յարութեան Բրիտտոսի, այլ նաեւ միւս առաքեալները որոնք արդէն զայն տեսած եւ խօսակցած էին անոր հետ : Եւ նոր կտակարանի վկայութիւնն արժանի է ընդունուելու կատարեալ վստահութեամբ : Բանասագուշտաց ժամու մը մէջ չէ, մըտաւորական խելացորտութեան կամ գլխու պտոյտի վայրկեանի մը մէջ չէ որ առաքեալները տեսան իրենց Տէրը յարուցեալ : Անոնք տեսան զայն, չօչափեցին, նստան իրեն քով, լսեցին իր շրթանց խօսքերը : Անոնք ընկերացան մինչեւ Սուրբ լիոը, որ ծառայեց անոր իբր ակոռակ՝ բարձրանալու համար երկինք իր փառաց մէջ :

Կը հասկնամ Թովմասին յուզումը, չըփոթութիւնը, երկրպագութիւնը, եւ այն պաշտելի ու բո՛ւն սիրոյ աղաղակը, որ աւելի սրտէն դուրս կը պոթկայ, քան շրթներէն :

—Տէ՛ր իմ եւ Աստուած իմ :

Սա աղաղակ է հոգւոյ մը՝ որ կը շառաղունի իր անհաւատութեանը համար : Սա աղաղակ է նոյնպէս հոգւոյ մը՝ որ կը ցնծայ եւ կը բերկրի Փրկիչ մը ունենալուն համար : Սա աղաղակ է վշտի մը եւ աղաղակ երախտագիտութեան :

Որչա՛փ գեղեցիկ է Բրիտտոս, ընդունելով այս մեծարանքն առանց հպարտութեան եւ սին փառաց : Նա չըսաւ Թովմասին, ինչպէս քիչ յետոյ Բառնաբաս կը

Պողոս ըսին Լիւստրայի բնակիչներուն՝ երբ կ'ուզէին իրենց զոհեր մատուցանել .

—Ո՛վ մարդ, ինչո՞ւ կ'ընես ասիկա, ես ալ միեւնոյն տկարութեանց ենթակայ մարդ մըն եմ՝ ինչպէս դու :

Ո՛չ, ո՛չ : Նա կ'ընդունի այս մեծաբանքը, Նա կ'ընդունի երկրպագութեան այս նշանները, եւ կը հաւանի այսպէս իր Եկեղեցւոյն՝ կոչել զինքն ապագայ դարուց մէջ . «Թագաւոր թագաւորաց եւ Տէր տերանց, — Նա՛ Որ է, Որ էր եւ Որ լինելոց է, Ամենակարո՛ղն» :

Ո՛վ դուք, որ կը մերժէք ասաքեալներու այս վկայութիւնը, որ կ'ուզէք յանձին Քրիստոսի տեսնել իմաստուն մարդ մը, կը դողամ ձեզ համար երկնային սարսուռով մը : Եթէ Աւետարանը ճշմարիտ է, եթէ Քրիստոս ճշմարտագէտ յարուցեալ է, եթէ Նա պիտի դատէ կենդանիները եւ մեռեալները, եթէ Նա է միահեծան Տէրն երկնքի մէջ եւ երկրի վրայ, ինչպէ՞ս պիտի զիմանաք անոր նայուածքին, ինչպէ՞ս պիտի վարուիք՝ երբ վարագոյրները վերջուած ըլլան եւ դուք տեսնէք զՆա դէմ յանդիման :

Գալով մեզ, որ կը հաւատանք Փրկչին յարութեան եւ կը խոստովանինք եւ զիտենք թէ նա է Փրկիչն մեր հոգիներուն, չհեռանանք երբեք Եկեղեցւոյ հաւատքէն, ա՛յն Եկեղեցւոյն որ ծնունդ առած է սասնեակու առաքեալներու կոչումով, եւ որ պիտի տեսէ մինչեւ ցլախճան դարուց :

Այս Եկեղեցին իր հալածանաց օրերուն մէջ, ինչպէս իր յաղթանակաց օրերուն, այն ժամերուն երբ կը ծածկէր իր առանձնական կեանքը անապատաց մէջ, ինչպէս երբ նա կը բարձրանար սուրբ թագաւորաց զահոյից վրայ՝ մի՛շտ ըստ առ Քրիստոս իր զաւակաց բերնով . «Տէ՛ր իմ եւ Աստուած իմ» :

Կրկնենք պաշտամունքի այս աղաղակը ժամանակակից նիւթականութեան արշաւանքին մէջ, հանդէպ մեր դարուն յուշուած նկարագիրներուն կամ բո՛ւռն զգացումներուն, երբ ա՛յնքան ձեռքեր կը բարձրանան կործանելու համար Փրկչին

Թագաւորութիւնը, երբ ա՛յնքան ձայնիւր կը կրկնեն հին կատաղի աղաղակը . — Բարձր, խաչեցի՛ :

Այո՛, մենք կ'երկրպագենք, ո՛վ մեր Փրկիչը, մենք կը պաշտենք, զՔիզ ընկերակցութեամբ հրեշտակաց, փառաւորեալ սրբոց, ասաքելոց, մարգարէից, խոստովանողաց եւ հաւատացիւց, ամէն ժամանակներու մէջ : Մենք կ'երկրպագենք բոլ Եկեղեցւոյ հաղորդութեան մէջ, ապահով՝ որ եթէ մենք մեռնինք քեզի հետ պիտի թագաւորենք նոյնպէս քեզի հետ դարուց ի դարս :

A. Gout.

Մանչեսթըր

Թարգմ. Ֆրանս. ԵՐԷՑ

ՄՐՏԻՆ ԾԱՐԱԻԸ

Բ. (2)

Շատ ուշի ուշով եւ ճարտարութիւնով մօտենանք սրտին, եւ ուսումնասիրենք իր ամէն կողմովը, զի մէկ վայրկեանի ծառան իսկ ակնթարթի մէջ տխուր հեռուանքներ կը ծնի ու ասով կեանք մը ամբողջ կը խորտակի : Սիրտը լաւագոյն փափաքներու, մաքուր զգացումներու, ազնիւ բաղձանքներու, չինիչ ու վսեմ գործերու, զերագոյն ճշմարտութիւններու, երկնային կատարելութիւններու զարկովը, արտփումովը մինակ կեանք կրնայ ունենալ, ու մենք հակառակէն զայն կ'ընենք բոյնը՝ չոր կերքերու, յտի ունակութիւններու, զէչ վարքերու, ստոր բարքերու, դձուձ մոլորութիւններու որ հոն աճին, զօրսնան, օրէ օր բուսնին : Ըսել է մենք բոլորովին Աւետարանի մեղ ուսուցած ճանրէն ու սուած պատուէրէն հեռի տպրած ամենէն մեծ ծարաւը ունեցած պիտի ըլլանք : Քրիստոնեան պարտի պահել սիրտը ամէն բանէ աւելի. զի կեանքին հոգին է ու աղբիւրը ամէն ջրերու : Քնարերգու Դաւիթի աղօթքը եւ խնդրուածքը՝ մեր ամենուս ամենօրեայ խնդրուածքը պէտք է ըլլայ . «Սիրտ սուրբ հաստատեալ յիս» :

(1) Երկրորդ եւ վերջին մաս :

պիտով պիտի իրագործուի սրբութեան
զազափարականը իր գործնական փուլե-
րովն ալ. այս զազափարականը ծնունդ
պիտի տայ գործնականին, երբ Աստուա-
ծային օրէնքներուն ենթարկենք, կանոն-
ներուն հպատակինք խորհուրդով, յղացու-
մով, մտածումով, իօսքով, կամքով ու ամ-
բողջ ինքնութիւնով. կրնանք ընել այս
ամէնը որ փափաքնիս է, կատարենք
պիտի այն ամէնը զոր կը պարտաւորինք
ի զուխ հանելու. այն ատեն Սրտի
Սրբութեան ծարաւը յագեցած պիտի լինի,
որ է բարիք գործել կամ բարիք գոր-
ծելու կարողութիւն, մտքին համեմբ,
կեանքին հրապոյրը, ու խրդճին մը-
ցանակը — Սրտին Լոյսի ծարաւն ալ
նոյնչափ ստիպեցուցիչ է որչափ սրբու-
թեանը, եւ յայտնի պէտք է խոստովա-
նինք թէ ամենակարեւորն է, ու նոյնչափ
մըն ալ թէ գոհացումն եւս շատ անգամ
խոյս կուտայ, կը թռչի ու կը փախչի
անյղի՞թէն, զի իր ժամանակին աղբե-
ցնելու փութաջանութիւնը չենք ունենար.
ու բնական է որ ծարաւը կը ծաւալի, կը
կ'ընդարձակի, կը սաստկանայ անհամեմատ
սապերու ճանրայ կը բանայ. Ու որով պիտի
գոհացուի եթէ ոչ Անորմով. «Եղեւ Այր
մի Առաքեալ յԱստուծոյ, սնունն նմա Յով-
հաննէս. սա եկն՝ ի վկայութիւն զի վկա-
յեսցէ վասն լուսոյն. զի Ամենեքին հաւա-
տացեն նովաւ. ոչ էր նա լոյսն, այլ զի
վկայեսցէ վասն լուսոյն, էր լոյսն ճշմա-
րիտ որ լուսաւոր ադնէ վամենայն մարդ
սը գալոց է յաշխարհ» (Յովհ. Ա. 6,
9): Ամէն սիրտ որ յաշխարհի ծնունդ
կաննէ եւ Ս. Աւագանով վերստին, պիտի
կրնայ լուսաւորուիլ մինակ Անով որ
ճշմարիտ լոյսն էր, անկէ ուրիշ-
ներ լոյս չեն կրնար բլլալ այլ մինակ ու
մինակ վկայողներ: Քրիստոնեան լոյսի
ծարաւը լոյսերու լոյսովը պէտք է յագե-
ցնէ, եւ զգոյշ ըլլայ չառնելու դերը ամ-
պերուն, խաւարին ու մէգին, որոնք շատ
անգամ աղւոր ու անուշ արեգակը կը քո-
ղարկեն, պատճառելով միծ վիշտ աշխար-
հին ու կեանքերուն. սիրան ալ կ'ամպոտի
մէգով, ու խաւարով կը ծածկուի. հոն

Ագամայ մութը, խոր աղջամուղջը, արհաւ-
րոտ գիշերը, ողջ կենդանութիւնները կը
թաղէ մահահանգոյն, երբ անագնիւ բար-
քեր, ցած վարքեր, տգեղ ընթացքներ,
մոլի ու յոռի սովորութիւններ, ստութիւն,
վատութիւն, ծուլութիւն ու յուլութիւն
տեղ տեղ ամպանման խուժեն ու փռուին
հոն, ծածկելով Երկնային Արդարութեան,
լոյսի, ճշմարտութեան խորհուրդները. եւ
այն ատեն Սիրտը պիտի զգայ ամենամեծ
դժուարութիւնը՝ քաղելու ջրի Ակնէն որ
ծարաւը պիտի կրնայ գոհացնել, ու ինք
իր սունին մէջ պիտի խռովի, յուզի, լքի
խորտակի, ու բեկանի Քրիստոնեան ու
Հայն աւելի լոյսին ծարաւին է, նախ Սրբ-
տին, Մտքին, Կեանքին: Զէ՞ որ ամեն լաւ
ու բարի, օգտակար ու շինիչ գործեր
լոյսին մէջ միայն կը գործուին, բոլոր
յայտնի բարիքները, ընդ որս եւ ծածուկ-
ները հոնկէյ կը բլլան, սքանչելի խոր-
հուրդները այդ քուրաէն կը սրբուին,
գեղակերտ հրաշակերտները հոն կը կեր-
տուին, աչքաւոր ու զարմանահրաշ հրա-
շալիքները հոնկէ կը ծնին, երկնքի հիւզ-
դեցիկ փառաւորումները հոն կը ցուանան.
լոյս սրտին մէջն է որ Աստուածային
Ճշմարտութեան ու Արդարութեան ամբողջ
լեցունութիւնը կը փայլի, եւ անով է որ
մարդիկ կրնան հաղորդակցիլ. Ահա Հայրն
է որ նոյն լոյսովը կը լեցնէ Որդին եւ
Հօրը կամքը կը կատարուի Որդոյն՝ Լոյսի
միջոցաւ. Սրտերն ալ նոյն լոյսովը
ապրած ու վերանորոգուած պէտք է լի-
նին իրաւ է թէ աշխարհս՝ ճշմարիտ լոյսի
ծարաւին պատասխանեց ամենաստոր մի-
ջոցով մը, երբ խաչին վրայէն կըսէր. —
«Ծարաւի եմ» Ու լեզին ու քաջախըտրուե-
ցաւ իբրեւ յագեցում պատակին. բայց եր-
կինք այնպէս չի պատասխաներ ու չպա-
տասխանեց, նայեցէք վերը շատ հեռու-
ները, ու պիտի տեսնէք իր «բաց պատու-
հան»ները. ու ատով պատասխանեց, պատ-
ուեց ու մեծարեց Անով նաչին խաչա-
շարժար զոհաբերութիւնը. Քրիստոնեան
պէտք է սոսկայ, սարսափի ու դողայ,
երբ իր սրտի լոյսի ծարաւին տեղ խա-
ւարի հիւթը հրամցնէ, ջրիկ տեղ քաջախ

տայ. սա ամենամեծ ապախտ ապաշոր-
հաւթիւն է. եւ ինչո՞ւ չհաւատալ, ին-
չո՞ւ երկմտիլ, երկբայիլ երբ Ան ամեն
օրի ու տարիի, ամեն սեռի ու հասակի
կ'ըսէ. «Ան որ ծարաւի է թող ինծի գայ
ու խմէ»։ Սիրա՞ր՝ կետնքին տունը, լոյսին
հանգրուանը, ճշմարտութեան կեդրոնը,
որուն մէջ Ան պիտի նորոգէ իր էութեան
հեղինակութիւնը, Ան պիտի կառուցանէ
ինկած կոթողը, Ան պիտի վերապրեցնէ
հինգած կեանքը. Ան պիտի արեւազարդէ
չիջած ու մարած լոյսը, Ան պիտի դադ-
րեցնէ խռովքն ու յուզքը, Ան պիտի
պարգեւէ երկնքի խաղաղութիւնը ոչ թէ
Աշխարհինը, Ան պիտի արձանացնէ կա-
տարելութիւնը։ «Ան որ ուղին ընդունած
է, կեանք ունի» (Ա. Յովհ. Ե. 12)։ Ու
Ան՝ Որդիին կեանքը՝ ճիշդ Սրտին համա-
պատասխանող կեանքն է, այն կեանքը
որ կեանք է, ան լոյսը որ լոյս է կեն-
դանի է, անսկիզբն ու անվախճան. «Բան-
դի ես կենդանի եմ եւ դուք կենդանի
պիտի ըլլաք» (Ա. Յովհ. ԺԴ. 13)։ Երբ
անվախճան լոյսը մեր մէջ յայտնուի, մենք
ալ պիտի յայտնուինք անոր փառքովը,
եւ պիտի գտնենք մեզ հատցնող, սպառող,
նեղող ու մեղցնող ծարաւը յագեցնելու
միջոցը։

Ինչ որ է սրբութեան ու լոյսի ծա-
րաւը, նոյնն է եւ առաւել Սիրոյ ծարաւը։
Ի՞նչ յոյս ու ի՞նչ լոյս եւ ի՞նչ երանու-
թիւն այն բարձունքէն որ կուգայ երկ-
րաւոր կեանքի՝ Սրտին, երբ՝ սիրոյ ծա-
րաւը իր մէջը կը զգացուի եւ պատրաս-
տութիւնը կը տեսնուի յագեցումին, ու
ամէն բան բարեքին կ'ընկերանայ, երբ
սրտին սէրը կայ։ Ամէն քրիստոնեայ ջա-
նալու է լաւէն աւելի լաւագոյնին հաս-
նելու եւ ընդունելու երկրային կեանքէն
չառ բարձր երկնայինը որ իր տեսա-
կին մէջ եզական է. ինչ որ է սիրաւ մարմ-
նոյն կազմութեանը մէջ եւ ծարաւը սէրին
մէջ։ Սրտի սիրոյ ծարաւէն ցամքած պա-
պական թրիստոնեաներ չառ եւ նոյնչափ
չուտ պարտք ու պէտք ունիք այս ծա-
րաւի գոհացումին որ ձեզի սպառեր,
ցամքեցուցեր է, մեղուցեր է ամէն կեանք

ու կենդանութիւն։ Ու սրտին սէրը ո՞ր
դարուն եւ ո՞ր ժամուն չի պահանջուիր
եւ ո՞ր օրերու չպիտի պապակեցնէ. ու
ամէն յոյս ու նշոյլ չպիտի՝ ստաքանց
ընէ։ Ծարաւածնէր քաջալերուեցէք, պա-
պականներ փութացէք. զի դուք ընտ-
րուածներ էք, իրն էք ու ինք Գողգոթայի
բարձունքէն նոյն խոստումնոյն զոհարե-
լութիւնը, նոյն պատուէրը. նոյն ցնցող
ձայնն է որ Ձեզի կը հասցնէ.—Եկէք ո՛վ
ծարաւածնէր եկէք իմ կեանքի ջրէն կուշտ
կուռ խմեցէք. փութացէք ծարաւնիդ յա-
գեցնելու ու ուրիշներունն ալ, ու ամէն
որ իրարմէ սովրի թէ ծարաւը բուն սի-
րոյ ազէն կը գոհացուի։ Անո՛ր դիմել, միայն
Անո՛ր. փութացէ՛ք ատելութիւններով
ծարաւածնէր, մախանքի կոստանքով
պապականներ, ոխի, քէնի հիւսնդութիւն-
ներով ցամքածներ փութացէ՛ք զի ծա-
րաւի բուրգեր ու լեռներ չիներ էք, ծո-
վեր ու ովկէսներ լեցուցեր էք, բայց
վստահ եղիք թէ ներքին ծարաւին բաւե-
լու չափ, ու աւելին գոհացնելու կշռովը
ճոխ առատութիւն կայ աննման Սիրոյ
Ակին քով։ Եթէ ձեր սիրտը ծարաւի
ճանրատար խաչը ունի յուսին, ինչպէս
կարճ պահերու մը համար անսահման սէրը,
ուղիղ անոր նման կենդանի օրինակը,
լման տիպարը եղիք բոլորովինուիրուած
այդ խաչի ծարաւին, որ կրցաւ լեցնել ամ-
բողջ աշխարհի ծարաւը. խաչաչարչար
Ձոհին խկատիպ նմանութիւնովը բացէք
կողերնիդ, մերկացուցէք կուրծքերնիդ
ամէն թշնամութիւններու, ամէն ատելու-
թիւններու, հարուածներու, սուր տէգերու,
նիզակներու, եւ վստահ եղիք թէ՛ կեն-
դանի ջուր պիտի բղխէ. զի Սէրը հոն
տիրած ու թագաւորած է, ու անտի մինակ
բարեք կը բղխի. կշտացէք ու կշտացու-
ցէք, լիացէք ու լիացուցէք, ձրի առնելով
ձրի բաշխեցէք մէկզմէկու, ու մատուա-
կեցէք սրտի սիրոյ բաժակէն, ա՛յն սէրէն
որ չի սատիր, չի կծուտոր, չամբար-
տաւանանոր, չամպարահաւածիր, չան-
գոտներ, չի խոտեր, չի բորբոքիւր, չի վնա-
սեր, չի մեռնիր ու չի մեռցնիր։ Սիրոյ օ-
շարակը քաղցր է, կեանք է, համով, երկ-

նային ու զրախտաբուխ է: Փութացէ՛ք մանաւանդ, հայ Սիրտ, ցաւոտ, վշտոտ, խոցոտ սգաւոր, վիրաւոր ու դժբաղդ Սիրտ, դո՛ւն չատ ու չատ պէտք ունիս Սիրով լցուն ծարաւին, ու իրօք ծարաւի ես, խմէ՛ խմէ՛ այն ջրէն որ խմեց ու ամէնուն ալ խոստացաւ թէ եկէ՛ք: Ու Սրտինը Սէր ո՞ր ժամուն չէ պէտք, եւ ո՞ր ժամանակ է որ չի պահանջեր ու ամէն այսօրի համար շեշտուած պէտք մը չէ՞. կեանքերու, սուներու, երկիրներու, յառաջդիմութեան ու զարգացումին կեդրոնը չէ՞, օրէնքին հիմը չէ՞. ընկերական բարձրացումին խաբիսը չէ՞. ինկած անձին, կորսուած պատիւին յենարանը չէ՞, Սրտին միակ իղձը, հարստութիւնը չէ՞: Ինչո՞ւ հայ քրիստոնեան բոլորովին անգիտանայ, որուն՝ բռններով ու աշխարհնչրով կը կարօտի: Հայը աւելի չի կարօտի՞ր կամ չի պիտե՞ր թէ իր ջախջախուած, չարչրկուած, հարուածուած, հալածուած օրերուն ան ահաւոր ժամերուն նոյն Սրտին էր որ կրցաւ դարձեալ կեանք տալ: Ու հիմա՞յ մունա՞լ. մոռնալը Հայուն մահն է:

Ծարաւի պատճառը ուրիշները մի՛ համարիր ու գործուած զանցառութիւնը խաբուսիկ երեւոյթներու մի՛ վերադրեր, անտեղի անհարկի, եւ անհիմն ճիգերու մի՛ սլլուիր. այլ յագեցուր, ծարաւդ անցուր բուն ջրով: Ան կը ցանկայ Եդեմի աղբիւրին որ խորունկ է, վճիտ, մեղրահամ ու մշտանոս եւ երբէք անմաքուր. խորունկ պեղէ որ ջուրը գտնուի, զի դժուարագիւտ է, բայց ո՛չ կորնչելի. ինչ որ այսօր չես կրնար համարիլ, յարատեւութիւնը վաղուան համեմունն զրաւականն է, Ան յաւիտեան վաղուան է կեանքով, եւ մշտակայ հոռուն անմահութիւնով: Եկէ՛ք ինքնին աղբիւրն է, անկէց նեկտարն է որ կը բղխի: Երկրաւոր չէ՛ այլ երկրաւոր. զիմեցէ՛ք շապուցէ՛ք մի՛ դանդաղիք: Այս ձայնը անցեալ դարերէն մինչեւ մեր օրերուն, մեր օրերէն մինչեւ հեռաւոր ապագային պիտի հնչէ, ձայնէ ու արձագանքէ. ու Անոր անուշ հնչիղ զօլանջը ոսկեթրթիւ լեռներու բարձրու-

թիւնները պիտի լեցնէ, ծովի ու ովկէանի խորունկութիւնները պիտի ալեծփէ, Ան հարուստին սուռնէն ներս ուշագրութիւն պիտի վէտլէտէ, իսկ աղքատին խրճիթէն ներս յոյս պիտի ներշնչէ. անհաւատին, թիրահաւատին, իմաստակէն դանկէն ու մարմնէն ներս սոսկում ու իրականու-թեան պիտի ձանձնէ. իսկ ազէտին. խեղճին. միամտին սրտէն ներս նոր արթնու-թիւն մը, քաջալերութիւն մը պիտի մըտցնէ: Ուրեմն, ամէն ու բոլոր ծարաւածներ, Անո՛ր, մինակ Անոր դիմեցէ՛ք, Զեր Սրբու-թեան, Լոյսի եւ Սիրոյ ծարաւը պիտի յագեցնէ մինակ Ան: Եկէ՛ք ինծի ո՛վ ծա-րաւածեր եւ ես պիտի խմցնեմ:

ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԱՍԼԱՆԵԱՆ

ՀԱՅ ԿԻՆԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՒ ՔԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԵՐՈՒՆ

Ն.Ս.Մ.Ա.Կ

Առ յարգելի Գ.Ա.ԶԲՈՒԿ

Վարդանանց աօնի առթիւ «Հայ Կինը Երգ դարուն» վերաառութեամբ ոսկեղի-նիկ Եղիշէի վերջին հատուածն աշխարհաբարի վերածելով հրատարակութեան տուեր էք «Տաճար»-ի թիւ 6 փետրւար 19 թերթին մէջ:

Ուրախ եղայ նախկին հայ կեանքէն եւ մանաւանդ հայ կանանց կեանքէն այս սրտակեղեք տղերն ի լոյս ածելուդ համար, եւ շատ պատուական գործ մը կատարած կը լինիք, եթէ պարբերաբար այսպիսի վերյուշումներ, բազմաթիւններ, քննադատութիւններ հրատարակէք, մատնանիչ ընելով Երգ եւ Իրգ դարու հայ կանանց կեանքի տարբերութիւններն եւ ուղղութիւնը:

Հինգերորդ դարուն, պարսից Սասանեան քանդուելիք հարստութեան օրով, մեր պատուական տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, իրենց հաւատքին, համոզման եւ դոյութեան պահպանման համար ամէն կերպ տանջանաց եւ չարչաւանաց սիրով եւ համբերութեամբ կը տա-

նէին եւ անմահ անուն մը կը թողէին. իսկ քսաներորդ դարուն, մեր փափկասուն տիկիները, հասոյթի աղբիւրներ պաճարելու համար Միացեալ եւ Հայունեաց ընկերութեանց պարահանդէսներուն առթիւ իրենց ամենաճոխ եւ հոլանի հագուստներն, ընչեղ զարդերն ի սպաս դնելով եւ ցուցադրելով բարեղ զաստակներն, սպիտակ կուրծքերը, կլորիկ մարմիններն ի մէջ այլոց կիլիկիոյ վերջին կոտորածին ուղղակի կամ անուղղակի հեղինակներուն, կը խօսուըտին, կը դիւթեն կը շնթեն կը պարեն եւ կը շոայլն իրենց բոլոր շաղակրատութիւններն . . . եւ չին վարնար որ հուսկ ուրեմն անաչառ քննադատ մը կայ, Պատմութիւնն, որ չարաչար կը դատափեալէ իրենց այս անձան վարմունքը, իբր թէ Հայ ընկերութեանց համար ուրիշ պատուարեր աղբիւրներ չըլլային հասոյթի, եւ անպատճառ մեր կիները ցուցադրելու ենք հասոյթի աղբիւրներ ճարելու համար . . .

Դալով այն հատուածին ձեր աշխարհարար թարգմանութեան, մէկ քանի դիտողութիւններ ունիմ, որք կը յուսամ թէ ձեր ուշադրութեան պիտի հանդիպին.

Սկսինք ուրեմն.

«Ոչ մէկուն համար անկողին կը ձգուէր»:

Գրաբարն է.

«Ոչ որ ումեք անկողնարկ լինէր»:

Այսինքն ըսել կ'ուզէ որ ոչ ոք ոչ ոքի համար անկողին չէր ձգեր, վասն զի տիրուհին եւ նաժիշտն հաւասար էին:

Դուք ըսեր էք.

«Որովհետեւ խոտեղէնը մետաքսեղէնէն չէին զատեր անդամ, չոր խոտին մութ գոյնը նոյն էր զխու բարձերուն սեւութեան հետ»:

Գրաբարն է.

«Քանզի եւ չճանաչէին իսկ զխոտեղէնն ընտրել ի միմեանց, մի գոյն թիւութեան փախրայիցն եւ մի գոյն սեւութեան անարից բարձիցն»:

Ասոր մէջ «մետաքսեղէն»ի խօսք չի կայ. փախրայ կամ փրիսայ յունական բառ է եւ կը նշանակէ չոր խոտ. ըսել

կ'ուզէ որ անկողինն ու զխու բարձերը չոր խոտէ էին, եւ ա՛յնքան սեւ, զորս չէր կարելի իրարմէ դանաղանել:

«Չանկաւ օշնան ի ձեռս փափկասուն կանանց, եւ ոչ մատուցաւ իւղ ի զուարթութիւն խրախուժեան»:

Օշնանը ա՛հա թարգմանելէ յետոյ, ծանօթութեան մէջ ըսեր էք որ «տասն եւ չորս դար առաջ գործածուած յարգի օճառն էր մեր այսօրուան հասարակ օշնանը (թուրքերէն չէօյէն)»:

Ձէ կարելի բացարձակ ըսել որ մեր այսօրուան հասարակ օշնանը տասն եւ չորս դար առաջ մեր փափկասուն տիկիներուն գործածած յարգի օճառն էր, քանի որ անմիջա էս յետոյ կ'ըսէ թէ «ոչ մատուցաւ իւղ ի զուարթութիւն խրախուժեան»:

Այսինքն հոգին զուարթացնող անուշահոտութիւն չի տրուեցաւ անոնց լուայուելէ յետոյ. ինչպէս կը գտնէք, Ձեօյեկէ յետոյ Բարձիւնի! քիչ մը տափակ չի՞ թախի:

«Չեղան առաջի սուրբ սկտեղք»:

«Անոնց առջեւ յղկուած պնակներ չի գրուեցան»:

Տասն եւ չորս դար առաջ ձեր եւ մեր հասկցած կերպով պնակներ չի կային, այլ սկտեղ, սկտեղ՝ թուրքերէն «սինի» կոչուած պղնձ անօթներն էին, ինչպէս որ հին բարի ժամանակներ մեր ամենուս տունները կը գտնուէին: Հին ատեններն ալ այս սկտեղներն իրենց տերանց դիրքին համեմատ պղնձէ, արծաթէ, կամ ոսկեղօծ պղինձէ կը կերտուէին, հետեւաբար վերելի հատուածին մէջ «յղկուած» կամ չի յղկուած «պնակ»ի խօսք չի կայ, այլ պէտք էր ըսել մաքուր փոխէներ կամ մատուցարաններ չի գրուեցան անոնց առջեւ:

Նախնեաց գործերը թարգմանելու ատեն նոյն ժամանակի նիսան ու կացը ի նկատ տեսելու է կը կարծեմ, որպէս զի թարգմանութիւնը չլինով կամ բռնազրօսիկ չլինի:

«Չիչեցան նոցա թէ գուցէ ոք ամենեւին ի բնականութեանդ դայիկաց»:

Դուք թարգմաներ էք. «Անոնք չիչե-

ցին անգամ իրենց վրայ գուրգուրացող սնուցիչները»

Վերի հաւածին մէջ ոչ գուրգուրացողի խօսք կայ եւ ոչ «սնուցիչ»ի. «ընակասնունդ» ըսելով պէտք է հասկնալ տունէն հասած, տունը մեծցած (պրակ. իսանէզատ), եւ «դալեակ»ը պէտք է հասկնալ հրախանդուն հոգ տանող (պր. դալէ)։

«Կործանեցան բարձրագահք տաճարաց նոցա եւ խանդարեցան սպասք երախանաց նոցա»

Դուք թարգմանիր էք. «Անոնց ճաշարհներուն բարձր բաղնոցները կործանեցան եւ կիրուխումի անոթները տակն ու վրայ եղան»։

Աւելի լաւ կ'ըլլար ըսել. «Անոնց սեղանատան բարձր գահերը կործանեցան»։ Այժմ իսկ սեղանը գետնէն քիչ վեր տեղ մը կը դրուի եւ կը կոչուի թուրքերէն բառով թախթ — գահ։ Իսկ «կիրուխումի անոթներ»ը չի հասկցայ ուսկից դուրս եկեր են, աւելի լաւ կ'ըլլար ըսել «սեղանի սպասներ»ը տակն ու վրայ եղան, «երախան»ը կ'երեւի որ խրախճանութիւն կիրուխում հասկցուեր է, մինչդեռ «սեղան» կը նշանակէ։

«Իրենց աչքերով տեսան ունեցածնուն յափշտակութիւնն, եւ ականջով լսեցին սիրելիներուն վշտակիր շարժարանը, դանձերնին գրաւուեցան եւ իրենց երեսին վրայ քնաւ զարդ չի թողուցին»

Ինչ աղէկէզ կրկնութիւն՝ կիլիկիոյ կոտորածին դժոխային պատմութիւնը, եւ այս՝ քաներորդ դարու մէջ, օսմանեան սահմանադրութեան հրատարակումն յետոյ . . .

Բայց շարունակենք,

«Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեայք եւ գլուհայք էին յիւրաքանչիւր բաստեռունս եւ ի գահաւորակս, հանապաղ բոկ եւ հետի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիք զի համբերել կարացեն մեծի նեղութեանն»

Դուք թարգմանիր էք.

«Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որոնք լայնանիստ բաղնոցներու

եւ գահաւորակներու վրայ հանգստացած եւ պաշտեալ էին, հիմա միշտ բոպիկ ոտքով եւ քաշիով աղօթաւայր կը յաճախէին, եւ առանց ձանձրանալու ուխտադրութիւններով համբերութիւն կը խնդրէին մեծ նեղութեան միջոցին»

Ներեցէ՛ք ինձ դիտել որ այս նախադասութիւնը լաւ ի միտ չէ առնուեր, վասն զի նախ, ոչ լայնանիստ ոչ ալ նեղանիստ բաղնոցի խօսք չի կայ, Բաստիւ = պատտառ (պրակ. փեստէր) փոքրիկ անկողնիկն է (տէօշէքճէ) մեր հասկցած «Շիթէ»ն է, ոչ թէ բաղնոց = Սէտիր։ Եւ յետոյ «գրգեայք եւ գլուհայք»ը երբէք «հանգստացած եւ պաշտուած» չի հասկցուիր, այլ զիրգ եւ փափուկ պահուած եւ փայփայուած (տճիկ. նազիք պէօյիւմիւշ) պէտք է հասկնալ, կովկասցի երանելի՝ հայագէտ մը «գրգեայք»ը = Գրկուած թարգմանիր էր . . . Բայց Արեւելեան գրագէտներն ինչ կարիք ունին Հայերէն լեզուն հասկնալու եւ մշակելու, քանի որ «Փինանսական միւնիստրութեան տէփարթամէնտի սէքցիան» ըսելով կը կարծեն թէ հայերէն կը գրեն։ Եւ ես լեզուս չի խանդաշելու համար կովկասի թերթերը շատ չեմ սրբեր կարգալ եւ կը զգուշանամ։

Ինչ որ է, անցնինք։

«Որ ի մանկութենէն իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց եւ ամճովք երէց, խոտարուս կենօք իրրեւ զվայրենիս բնդունէին զկերակուրն մեծաւ խընդութեամբ, եւ ոչ յիշէին ամենեւին զսովորական փափկութիւնս»

Դուք սապէս թարգմանիր էք.

«Անոնք որ իրենց մանկութենէն ի վեր հորթի ուղեղներով եւ որսի համադամներով սնած էին, վայրենիներու նման չափազանց ուրախանալով կ'ընդունէին բանջարեղէն կերակուրով իրենց ապրուստը, եւ երբէք չէին յիշեր սովորական փափկութիւնը»։

Այս նախադասութիւնն ոչ միայն լաւ չէ հասկցուած, այլ բոլոր բուսակերները վայրենի չինուած են անզգալաբար։

Լաւ չէ հասկցուած մէկ քանի կէտերով. նախ, զուարակը «հորթ» թարգմա-

ներ էք, որ մի եւ նոյնը չէ. նոր ծնած կովի արու ձաղը մոզի է, մինչեւ մէկ տարեկան հորթ է, եւ մինչեւ երկու տարեկան զուարակ է, ինչպէս որ տակաւին չի ծնող կովի ձաղը երինջ է: Յետոյ, Հայոց աշխարհի փափկասուն տիկիները կրնամ ըսել երբէք ուղիղ չէին կերած: Հայոց արքունիքը եւ բարձր դասակարգը որ հեռեւեղութիւն էր պարսից ընչեղ եւ ճոխ արքունեաց եւ ոստանին, բնականաբար կենդանւոյն ուղեղին, լեզուին եւ ոտքերուն չէին մօտենար, զի ասոնք աղքատիկ դասակարգին բաժինն էին, ինչպէս որ հն ցարդ. «ուղղովք զուարակաց»ը ոչ թէ հորթին ուղեղն է, այլ «զուարակին ուղիղն» է, որ թարգմանի պրակ. Բասթ=Բասթա, իտալերէն ֆիլէթօ, ֆրանսերէն ֆիլէ, տճկ. քուչ կէօմլու, աթինքն կենդանիին մէջքի ոսկորին միջեւ գտնուած փափուկ ուղիղ միտը, ուղիղ, ուղղոց, ուղղովք:

Մինչեւ ցարդ տառնէ աւելի թարգմանութիւններու հանդիպած եմ եւ ամենքն ալ այս «ուղիղ»ը ծուռ հասկնալով «ուղեղ» եւ ֆրանս. *cerveau* թարգմանած են:

«Ամճովք երէոց»ը որսի համադրամիւր չի նշանակեր, այլ ետեւի փափուկ մասերն հասկնալ պէտք է. երէ, Փայտակարանի (Գարատաղ) դաւառարարբառով է քրէցի, տճկ. էլիք=եղջերուի փոքր տեսակը կարճ եղջիւրներով, Պէտք է ճշտել լատերը, այնպէս չէ՞:

Շարունակե՛նք.

«Այրիք որ ի նոսա էին, հղեն վիրստին հարսունք ստաքինութեան եւ բարձին յանձանց զնախատինս այրութեանն»:

Դուք թարգմանե՛ր էք,

«Իրենց մէջ գտնուող այրիները առաքինութիւնով վիրստին հարսնացան եւ այրիութեան սուղը հանեցին իրենց վրայէն»:

Բայց խնդրեմ «զնախատինս այրութեանն» ի՞նչու «այրիութեան սուղը կը թարգմանէք. քանի որ հեղինակը «նախատինք» կը կոչէ զուք ի՞նչու համար սուղ կը հասկնաք. այրիութիւնն, հետեւելով հնդկա—պարսկական բարուց ըմբռնման

նախասիւն մէք ոչ թէ սուղ. վասն զի կինն իր մէջ նախատինք կը զգար ամուսնոյն մահէն յետոյ ապրիլը, ոչ թէ հիմակունան պէս օտար ազգերէ վարակուելով, «այրի տիկին» կոչուելը վաճառականութեան մէջ ընդունուած բաց դրան քաղաքականութեան համանիշ կը սեպուէր:

Այո՛, այն ատենի այրիներն առաքինութեամբ, քաջութեամբ պատերազմելով այրիութեան նախատինքը սրբեցին իրենց վրայէն, եւ նոր նոր հարսեր եղան երկնաւոր փեսային: Այս բացատրութիւնն աւելի իսէյա եւ աւելի խորհրդաւոր բան մը չունի՞ իր մէջ:

Յարգելի Գաղբիկ, վերջացնելով սոյն հակիրճ տողերս, կը խնդրեմ որ հաճիք ուշադրութիւն դարձունել ձեր ապագայ թարգմանութեանց մէջ աւելի ճշտապահ լինելու, եւ ընդունիք յարգանքս հաւաստիքը^(*):

ԽԱՉԻԿ Յ. ՍԱՐԱՃԵԱՆ

16 Մարտ 1911 Դալիքեժ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ՍՍՈՑ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

(Թղթակցութիւն «ՏԱՃԱՐ»-ի)

ՍԻՍ 29 Մարտ 1911

Մարտ 24ին Սիս ժամանեցին Տ. Գէորգ եւ Տ. Յակոբ Աշոտ Ս. Եպիսկոպոսները, իրենց հետ ունենալով նաեւ Ա.

(*) ՏԱՃԱՐի խմբագրութեան համար հաճոյք մ'է վայելել աշխատակցութիւնը Վսեմ. Խաչիկ խան Սարաճի, վաղեմի հրապարակագիր մը՝ գնահատուած իր փորձ մտքով եւ ուղղադատ գրչով: Դիտել կուտանք միայն որ ԳԱՉՐԻԿ բանասիրական աշխատութիւն մը կատարելու մրտաժողովը չէ ունեցած՝ եղիշէի յիշուած հատուածը թարգմանելու ատեն. այլ պարզապէս մեր հայ տիկիներու մարած եռանդն արծարծելու փորձ մ'է ըրած: Չգիտեմք թէ Դագրիկ ի՞նչ կարծիք պիտի յայտնէ բայց՝ ըստ մեզ՝ ի բաց առեալ մէկ երկու կարեւոր անհշդուութիւններ, որոնք ժամանակի սղութենէ առաջ եկած անուշադրութեան հետեւանք են ապահովաբար, մասնաւորապէս միւս կէտերը շատ երկրորդական են, եւ վիճելի ալ կրնան ըլլալ յայտնուած տեսութիւնք:

Ի՞նչ, Խ.

տանայի խառն ժողովոյ կողմէն անոնց ի պատիւ պատուիրակ կարգուած՝ Տ. Կարապետ Քչյ. Երեւանեան Ն. Ս. Օծութեան կողմէ մինչեւ Մերսին լնդառաջ գացած էր Եօզղատի Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վ. Դիմաքոեան, իսկ մինչեւ Նալպանտեաններու ագարակը՝ ուր պիտի գիշերէին, նախընթաց երեկոյին դիմաւորել գացած էր Կաթող. Փոխանորդ Տ. Հրանդ Ծ. Վ. Կարօեան, հետը ունենալով Եփրեմ եւ իմադ արեղաները, Քչյ. Հայրեր եւ Սսեցի ազգայիններ՝ Եշ. Ժամբ Էին Վանք մտան Սրբազանները եւ անմիջապէս Վեհարանի Դահլիճը առաջնորդուեցան, միաբանական դասուն առաջնորդութեամբ, որուն գլուխը կը գտնուէր Ատանայի Կաթող. Փոխանորդ Տ. Ներսէս Ծ. Վ. Դանիէլեան, օր մ'առաջ Ժամանած վիճակային այցելութիւնէն Սրբազան հիւրերը Դահլիճին դռնէն ընդունուեցան Ն. Ս. Օծութեան կողմէ որ Տ. Դէորդ Ա. ի ճակատը համբուրեց, երբ այն Հայրապետական Աջոյն վրայ կը դրոշմէր Կարօսի համոյրը Բոլոր ներկայք զգածուած էին Տ. Յակոբ Աշոտ Սրբազան եւս ճակատին վրայ ստացաւ Վեհաշնորհ Կաթողիկոսին համոյրը, եւ համբուրեց Ս. Օծութեան Աջը Ետոյ պատիւներ ընծայուեցան ներկայից եւ ժողովրդեան ներկայացուցիչներուն, որմէ ետք Սրբազան Հիւրերը առաջնորդուեցան իրենց համար պատրաստուած սրահ մը:

Շաբաթ օրը Վեհարան ներկայացան Եպիսկոպոսացու երեք Վարդապետները, որոնց պէտք եղած խրատականները ըրաւ Ս. Կաթողիկոսը՝ ի ներկայութեան բարձրաստիճան հիւրերուն, եւ ի մէջ այլոյ ըսաւ. —

«Վիճակիս Եպիսկոպոսական պակասը լրացներու Ժամը հասած է Կիլիկիոյ Եկեղեցեաց Կարօտութիւնը այնքան բազմազան եւ պէտքը այնքան բազմատեսակ է որ, ձեր գործունէութեան ասպարէզը սահմանափակել անհնար է, զձեզ մասնաւոր Վիճակներու վրայ ձեռնադրելով Դուք պիտի երթաք ուր որ պէտք կայ, պիտի գործէք ուր որ գործ գտնէք»

Իսկ Ազգ. Պատրիարքարանի հետ յարաբերութեանց տեսակէտով մասնաւոր նկատուման արժանի են սա խօսքերը. —

«Սրբազաններուն ներկայութիւնը բարենշան է, եւ մեզ կը յիշեցնէ Ազգ. Կեդր. Վարչութեան բարեացակամութիւնը հանդէպ Ս. Աթոռոյս եւ բազմաչարչար Գահակալիս Իրաւունք ունիմ յուսալու որ խտրական ոգին զաղբած է այլեւս, ու Տանն Կիլիկիոյ Աթոռոյն եւ միւս Աթոռներուն մէջ ձգուած չինական պատուարը իսպառ բարձուած»:

Այս խօսքերէն վերջ ընծայեալները հրաման ստացան երթալ պատրաստուիլ հետեւեալ աւուր սրբազան արարողութեան:

Հետեւեալ օրը, Կիրակի, Վանքի զանգակներն ու զոյգ կոշնակները սկսան հնչել, աւետելով սկզբնաւորումը արարողութեան. երկսեռ ժողովուրդը խուռնեւրամ արդէն գրաւած էր իր սեղը կէս գիշերէն առաջ, Վեհ. Հայրապետը ինք ըսկաւ առեանէն գիշերային Ժամերգութիւնը Արարողութիւնը սրտառուչ աղաւորութիւն մը թողուցին բոլոր ներկաներուն վրայ: Ձեռնադրութեան հանդէսը Ս. Լուսաւորչի Մոտն ի Վիրապն տօնին հանդիպելով, Հայաստանեայց անգղագահան Հայրապետին Աջահամոյրի մը խիթարութեան հետ նոյն հանդէսի օրհնութիւններն ալ վայելելու փափաքով, մօտակայ վայրերէն եւս բազմաթիւ ժողովուրդ զիմած էր Վանքը, ինչպէս նաեւ օտարազգիներ, Տեղւոյս Վսեմ. Կառավարիչ փաշան եւ Կառավարական ղլխաւոր պաշտօնէութիւնը: Տաճարին փառաշուք սեղանը տօնին յարմար շքով մը շքաւորուած էր, անհամար մոմերու պսպղուն նշոյլները՝ ոսկի ու արծաթ սպասներու փայլուն մակերեսին վրայ բեկրեկելով՝ լուսոյ առատ յորձանքով մը կ'ողողէին ամբողջ խորանը: Խորհուրդ Խորինէն առաջ Վեհ. Հայրապետը իրաւ-օսան ելաւ, հետեւորդ ունենալով ամբողջ միտ ու պզտիկ կրօնականները, ինչպէս մայր մեղուն՝ մեղուիկներու պարը: Իրաւ-օսայի մէջ տեսարանը վսեմ էր: Ըստ Մաշտոցի,

հանդէսին մէջ մասնակցութիւն ունեցող կրօնական զանազան աստիճանաւորներու եւ աշխարհական ամէն դասակարգի ներկայացուցիչք իրենց գոյնզգոյն դիպակեայ զգեստ չափերէնքուն համադրութիւններովը, շուքը կ'աւելցնէին Հայրապետական զգեստաւորման:

Ժամը երեքին միջոցները թափօրը կազմուած էր: Հրամանը կը տրուի շարժելու: Հայրապետին կը հետեւին երեք ընծայացուները՝ ստղաւարտ ի վրուխ: Հայնարձակ սանդուխները նեղ կուգան թափօրին, որ վերջապէս բակը իջնելով կը մանէ ծփացող ժողովուրդի շարքին մէջ: Թափօրը տաճարին աւագ դռնէն ներս կը մանէ՝ ուր կ'երգուի Հրաշափառ Շարականը: Ն. Ս. Օծութիւնը ուղղակի ելաւ Հոգւոյն Սըրբոյ Սեղանը, եւ երկու Եպիսկոպոսները Տաճարին հարաւային կողմը՝ իրենց շուրջը ունենալով եկեղեցական եւ աշխարհական դասակարգութիւնները: Իսկ ընծայացու վարդապետները անոնց շարքին ետին: Թափօրէն առաջ Ս. Կաթողիկոսը նստաւ: Հայրապետական Աթոռը: Ըստ Մաշտոցի, խորսուելակ Վարդապետը հետզհետէ կը կանչէր դէպի Ս. Հոգւոյն Սեղանին Եօթնաստիճան սանդուխներ՝ դպիրները, ջահելակները, սարկաւաղները եւ միւս դասակարգութիւնները որ գալով կեցան երկու շարքի վրայ: Եպիսկոպոսներէն վերջը կանչուեցան նաեւ Եպիսկոպոսացու Վարդապետները, ուր պէտք եղած արարողութիւնները կատարուելէն վերջը Եմփօրոններ հագցուցին ընծայացուներուն, եւ անկէ վեհ. Հայրապետը Եպիսկոպոսներով մէկ տեղ Աւագ սեղանի թիմը բարձրացաւ ընծայացու Եպիսկոպոսներով, ուր Դրքի առին կատարեց օծման արարողութիւնը: Ներսէս եւ Խորէն Վ. հերոս անունը պահելով օծման պահուն, Հրանդ Վ. անունը փոխեց՝ Եղիշէ անուանելով: Ապա գաւազան եւ մատանի տուաւ նորաստեղծ Եպիսկոպոսներուն, շատ գեղեցիկ բայց հակիրճ խրատական միջոցաւանդոն, թէ ինք եւ թէ միւսները յոգնած ըլլալուն:

«Պօղոս Ս. Առաքելը կ'ըսէ. — «Եթէ ոք Եպիսկոպոսութեան ցանկայ բարւոյ դոր-

ծոյ ցանկայ». սակայն քիչ մը անդին ալ կ'ըսէ. «Պարտէ Եպիսկոպոսին լինել հեզ, խոնարհ, անարատ, մի՛ բարկացող, մի՛ զօշաքաղ, մի՛ արծաթասէր»: Մանաւանդ արծաթասէր. արծաթասէր եկեղեցականը չի կրնար ո՛չ եկեղեցիին եւ ոչ ալ Ազգին ծառայել: Եպիսկոպոս ըլլալ չի նշանակեր միայն Աթոռի վրայ բազմիլ փառքի ու պերճանքի համար: Այլ պէտք է ըլլալ հեզ ու խոնարհ, արդար, տառապեալներուն եւ սգաւորներուն մխիթարող:» Քարոզէն վերջը աղօթեց եւ Ս. Հոգւոյն օծանդակութիւնը խնդրեց նորաստեղծ Եպիսկոպոսներուն համար՝ որ կարող ըլլան այս Ս. կոչման մէջ ծառայել Աստուծոյ եւ ժողովուրդին:

Պատարագը շարունակուեցաւ եւ Պատարագին Հայրապետին աջ ու ձախը կեցան ձեռնադրեալ Սրբազանները: Յետ աւարտման Ս. Եկեղեցւոյ, երեք Եպիսկոպոսները մնացին Տաճարին մէջ, ուր բոլոր ժողովուրդը աջամուրի եկան: Մէկ քանի ժամ վերջը լուսցման արարողութիւնը կատարուելով ուղղակի Վեհարան առաջնորդուեցան, ուր Ն. Ս. Օծութիւնը դարձեալ իր հայրական օրհնութիւնը տուաւ անոնց, ժողովուրդը մխիթարուած այս վեհազգեցիկ հոգեւոր հանդէսէն, անո չ տպաւորութեամբ մը տակ մեկնեցան:

ԿԱՐԱՊԵՏ ՔԶՅ. ԵՐԵՒԱՆԵԱՆ (1)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Ս. ԶԱՏԿԻ ՏՕՆԸ

Շնորհաւորութիւնք. — Փոխադարձ այցելութիւնք

Զատիկը մեծահանդէս տօնուցաւ մայրաքաղաքիս բոլոր եկեղեցիներուն մէջ, ի ներկայութեան խուռն բաղմութեան: Ուշադրութիւն կը գրաւէին հայ զինուորներն ու ոստիկանները, որոնց Զատիկական տօներու առթիւ հոգեւոր պարտականութեանց կատարման համար, Ազգ. Պատրիարքարանէ եղած խնդրանայ վրայ՝ որոշ-

(1) Հեռագրական վրիպակով մը մեր Աթ. Թղթակցին մականունը Երուանդեան տպուած էր սխալմամբ:

Ծ. Խ.

եալ օրերուն՝ արձակուրդ արուած էր զինուորական իշխանութեան կողմէ։ Տեղապահ Սրբազանն եւ քարոզիչներ սրտապընդող քարոզներով հոգեւորապէս մըխթարեցին հաւատացեալ ժողովուրդը։

Բշ. օրը, կէս օրէն ետք ժամը Չին Պատրիարքարանի մէջ կատարուեցաւ պաշտօնական ընդունելութիւնը՝ Ազգ. երեսփոխաններու, եւ այլ ազգային մարմիններու Ազգ. ժողովոյ Ա. Ասեմապետ Մանուկ էֆ. Ազարեան պատշաճ խօսքերով շնորհաւորեց Տեղապահ Բարձր. Տ. Վահրամ Ս. Արք. Մանկունին, կար եւ կարողութիւն մաղթելով արդիւնաւորմանը համար Ն. Սրբազանութեան ջանքերուն, ի կարգադրութեան ներքին եւ յարաբերական ամէն տեսակ խնդիրներու։ Ազարեան էֆ. մասնաւոր զոհունակութիւն յայտնեց Տեղապահ Սրբազանին ցոյց տուած փութաջանութեան համար։ Նորին Սրբազանութիւնը շնորհակալութիւն յայտնեց եւ բոլոր ներկաները շնորհաւորելով օրհնեց, իր բանախօսութեան մէջ մասնաւորապէս ծանրանալով տեւական համերաշխութեան պէտքին վրայ։ Առիկա կը ցուցնէ թէ, ըսաւ, մենք զիսկեք ի հարկին մոռնալ ամէն կիրք, եւ տեղի տալով Ազգ. գերագոյն շահին առջեւ, միացած աշխատիլ։

Ձատկական տօնի առթիւ շնորհաւորական այցելութիւն տուին Պատրիարքարան՝ Երեսփ. Ժող. նիսի. Անմէտ Րիզապէյ, գրեթէ բոլոր դեսպանատանց Աթարգմանները, Իսլամ եւ Հայ երեւելի անձնաւորութիւններ։ Հոգեւոր պետերէն եկաւ Պուլկարաց Էկզարքը եւ Ասորոց Կաթող. Փոխանորդը։ Այցաքարտ զրկած էին Հրէից բարունապետը, Պելժ դեսպանը, Կրօնից Տեսուչ Պէհապէյ եւ Նուազրով շնորհաւորութիւններ եկած են Ս. Էջմիածնի Կաթող. Տեղակալ Տ. Գէորգ Արք.էն, Կիլիկիոյ շնորհաւոր Կաթող.էն, Ս. Երուսաղիմա Պատր. Տեղապահէն, դաւառային առաջնորդներէ եւ ըն

Տեղապահ Սրբազանը Գշ. օր ընկերակցութեամբ Տ. Տ. Մաղաքիա Տէրունեան եւ Գրիգորիա Յովհաննէսեան

Սրբազաններու եւ Բազ. Ժողովոյ երեք անդամոց, շնորհաւորական այցելութիւն տուաւ Ֆէնէրի Յունաց Պատրիարքարանը, ուր Տ. Եօաքիմ Պատրիարքի եւ Մանկունի Սրբազանի միջեւ չափ սիրալիր տեսակցութիւններ տեղի ունեցան երկու Բոյր Եկեղեցիներու սիրալիր յարաբերութեանց մշակման պէտքին վրայ։ (Տեսէք այս մասին քիչ մը վարի հաղուածք)։ Թարգմանի պաշտօնը կը վարէր ծանօթ հայագէտ Տ. Եօաքիմ համակրելի սարկաւազը. տեսակցութիւնը կէս ժամու չափ տեւեց։

Տեղապահ Սրբազանը ի վերջոյ այցելեց Պուլկարաց Ս. Էկզարքին, ուր սիրալիր ընդունելութիւն մը եղաւ եւ փութապարձ շնորհաւորութիւններէ յետոյ խօսուեցաւ Պուլկարիոյ հովուութեան եւ զրպրոցական խնդիրներու վրայ, որոնց՝ Հայիրու ի նպաստ լուծմանը համար ամէն կերպով աջակցիլ խոստացաւ Տ. Եօսիֆ Սրբազան։ Մանկունի Սրբազան մեկնելու առին շնորհակալութիւն յայտնեց Էկզարքին, ինչպէս նաեւ Պուլկար կառավարութեան բարեացակամութեանը, որուն ապացոյցը առած էր, սիրայօժար հիւրընկալելով բռնապետական շրջանին փախստական Օսմանցիները՝ ամէն ազգէ եւ կրօնքէ։

«ԲՈՅՐ» ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ. — Անցեալ շաբթուան Տաճարին մէջ գրախօսականով մը կը ծանօթացնէինք Շ. Գաւահիսարի Յոյն Մեղրապոլիտ Տ. Պողիկարպոսի մէկ հրատարակութիւնը՝ «Հայ Եկեղեցին ուղղափառութեան տեսակետով», որուն մէջ հեղինակը «փոխադարձ զիջողութիւններու» վրայ կը խօսի, Հայ եւ Յոյն Բոյր Եկեղեցիներու միջեւ դառնաւ հերձուածք վերցնելու եւ միութիւն մը յառաջ բերելու համար։ Նոյն գործին մէջ հեղինակը հրապարակաւ կը հռչակէ թէ Հայերը հերետիկոս չեն։ Այս յայտարարութիւնը որ զոհունակութիւն միայն կրնայ պատճառել մեզի՝ Հայաստանեայց առաքելական Ս. Եկեղեցւոյ զաւակներուս, դժբախտաբար խոտորնակ կը համեմատի Յոյն Մեղրապոլիտներու մեծամասնութեան

ներքին համոզումին, եւ խաբուսիկ հանգամանք մը կ'առնէ: Իրողութիւնը այն է որ Յունաց Պատրիարքարանի Սինօզը քննելով Ազգ. Պատրիարքարանի առաջարկը թէ Հայ Բանանայ չգտնուած տեղերը Յոյն Բանանաներ հաղորդեն Հայ զինուորները, եւ երբ անոնցմէ մեծնող մը ըլլայ, Յոյն Բանանաներ կատարեն թաղումը, ընդունելի չէ դատած առաջարկը, եւ որոշած է որ առաւուսին օրհնեալ ջուր տան հիւանդ Հայ զինուորներուն: Մէկդի թողով Տ. Բօլիքարոսի հրապարակային յայտարարութեան, եւ Սինօզին որոշման միջեւ գտնուած խոչոր հակասութիւնը, մենք բաւական կը համարինք յիշեցնել թէ առաջին անգամը չէ որ Յոյն եկեղեցականներ աններող ոգի մը ցոյց կուտան Հայ եկեղեցիին հանդէպ, պաշտօնական առիթներու մէջ սիրալիւ խօսքեր եւ առեւտրային ցոյցեր շուրջիւով հանդերձ: Յոյն Սինօզին այս որոշումը Տ. Գրիգորիս Արք. Եպիսկոպոս Յովհաննէսեանի միջոցաւ հաղորդուեցաւ Ազգ. Պատրիարքարան: Փափաքելի է սակայն որ բացատրութիւն պահանջուի այս մասին, եւ թիւրիմացութիւն մը եթէ կայ, փարատուի, քանի որ Օսմ. բանակին մէջ հայ եւ յոյն Բանանաներու փոխադարձաբար գործակցութիւնը ամենամեծ օգտակարութիւն մը պիտի ունենայ երկու ազգէ զինուորներուն հոգեւոր պէտքերու մատակարարութեան գործին մէջ:

Այս տողերը զրուելէ հտքը, օրաթերթերու մէջ կարդացինք Պատր. Փոխանորդ Տ. Կեռնդ Մ. Վ. Գուրեանի տեսակցութիւնը Տ. Եօաքիմ Պատրիարքի հետ, որ Փոխանորդ Ս. Հօր հարցումին պատասխանած է թէ Յոյն եկեղեցին ուղղափառ կը ճանչնայ Հայ եկեղեցին, բայց քանի որ եկեղեց. միութիւն չկայ, Սինօզը տարբեր որոշում չէր կրնար տալ, որովհետեւ այդ պարագային պէտք էր Օրթօտօքս միւս եկեղեցեաց եւ Պատրիարքութեանց կարծիքն ստանալ: Տ. Եօաքիմ Պատրիարքին հարցումին վրայ, Փոխանորդ Հայր սուրբը պատասխանած է թէ Հայ-հոռմշական եկեղեցին Ս. Հաղորդութիւն չի տար մահամերձ հայ զինուորներուն, որովհետեւ վերջին Օծում ունի, մինչ Հայ եկեղեցին չընդունիր ատիկա: Տ. Եօաքիմ Պատրիարքը զարմանօք լսեր է թէ Յոյն կղերին ձեռքով մկրտուած Հայեր, այլեւս չեն մկրտուիր Հայ եկեղեցիէն, օրինաւոր ճանչցուելով միանգամ կատարուած մկրտութիւնը: Տեսակցութեան ելլակացութիւնն այն եղած է որ Տ. Եօաքիմ

Պատրիարք, տեղեկութիւն առնելէ հտքը Հաղորդութեան մասին Հայոց ունեցած գաղափարին վրայ, խոստացած է այս մանրամասնութիւնները յայտնել Սինօզին, նոր ուսումնասիրութեան մը ենթարկուելու համար: Տ. Կեռնդ Մ. Վ. յայտարարած է նաեւ որ պէտք չկայ եկեղեցական ընդհանուր կարգադրութեան մը՝ այս խնդրոյն համար, այլ կարելի է տեղական կարգադրութիւն մ'ընելու իրաւունք տալ Բուսիլի կողմի միզրապոլիսներուն, ի նկատ առնելով զինուորագրութեան բացառիկ հանգամանքը, քանի որ երկրին միւս կողմերը քիչ անգամ կը պատահին այս կարգի դէպքեր: Տ. Եօաքիմ Պատրիարք այս առաջարկն աւելի նպատակաւոր մարտ տեսնելով, խոստացեր է Սինօզին ներկայացնել:

ԴՊԻՐՆԵՐՈՒ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ.— Պատերազմական նախարարութիւնը Ազգ. Պատրիարքարան ուղղած թեզֆերեով մը կը ծանուցանէ թէ Տիաֆօս անունով ներկայացուած բոլոր դպիրները չեն կրնար զերծ մնալ զինուորական ծառայութենէ, այլ ամէն եկեղեցի մէկ կամ երկու Տիաֆօս միայն կրնայ ունենալ, հետեւաբար այս նպատակով տրուելիք իւմուխապէրները չեղեալ պիտի նկատուին: Այս թէզքէրէն յանձնուած է իստան Ժողովին նկատառութեան, յառաջիկայ չորեքշաբթի օր:

ՊԱՇՏՏՈՆԱՆԿ.— Գոհութեամբ կ'իմանանք թէ Ներքին գործոց նախարար Խալիլ պէյ, Պատրիարքարանին բուռն բողոքին վրայ պաշտօնական ըրած է Պէհէսնիի Գըզլի գաւառակի միւստիք Ֆէհմին, որ հայ ազգիկ մը առեւանգելով բռնաբարած էր: Նախարարը գրած է նաեւ Խարբերդի կուսակալին, որ շուտով զրկէ իր տեղեկագիրը, օրինական պատիժը տալու համար:

Արտօնատէր ՀՄԱՅԵԱԿ ՔԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐՄԱՅՐ ՔԶՆՅ. ԿԵԶԻԿԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

ՄՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԱՊԱՑՈՅՑՆԵՐ.
— Հ. Հ. Բիկզի. — Թարգմ. Սողոմոն Կ. Ռահանեան. — Հրատարակութիւն կրօնասիրաց միութեան Երզնայի Տպագր. Յ. Մատթէոսեան, Գին 5 ու կէս ղըշ:

ՀԱՅՈՒՆ ԵՐԳԱՐԱՆԸ. — Պատկերազարդ ճայնագրուած երգարան լիակատար: Կազմեց Հմայեակ Արամեանց: Կը պարունակէ թէ՛ այն հատընտիր երգերը որոնք երևցած են զանազան երգարաններու մէջ, եւ թէ՛ կարգ մը բոլորովին անտիպ ընտիր երգեր: Կը հրատարակուի տեսար առ տեսոր: Գին իւրաքանչիւր տետրին՝ 20 փարա:

ՉԱՆԱԶԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ. — Սիրուած բանաստեղծ Մկրտիչ էֆ. Աճէմեան ոյս խորագրով հատորիկի մը մէջ ամփոփած է Եւրոպական սշտնաւոր բանաստեղծներու քերթուածներէն ըրած թարգմանութիւնները, ինչպէս Վ. Հիւկոյէն, Առվէռն, Սիւլի Բրիւսոմէն, Կ. Կուստանթօյիէն (խաւացի բանաստեղծ), Լաֆօնդէնէն, Պէռանթէի երգեր, Խայլն, Ասրուշան գեղեցիկ գրախօսականով մը կը բանալ հատորիկը, ուր կ'երեւան ինքնագիր քերթուածներ եւս: Տպագր. Շանթ, Գին 5 ղը:

ԿՈՀԱԿ

Պատկերազարդ քերթ

գրական, քաղաքական, ցնցեալական, ընկերային Յուն վար 23ին վերսկսած է հրատարակուիլ՝ խմբագրութեամբ Տիար Հմայեակ Արամեանցի, զարծեալ իշխել շարաթաթերթ, նախկին ուղղութեամբ եւ շահեկան պարունակութեամբ: Հատը 10 փարա:

Հասցէ՝ Կոնստանտինոպոլիս, Սամաթիա:

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂ. — Ամսաթերթ. հրատարակուեցաւ չորրորդ թիւը, ճոխ բովանդակութեամբ: Գին 2 ղը:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ.

— Հայագիտական ուսումնաթիւթ, խմբագրութեամբ Վիեննայի Միթթարեանց: Հրատարակուեցաւ մարտի թիւը: Տարեկան բաժնեգին 15 ֆր.: Հասցէ՝ Vienne (Autriche). VII/2 Mechitharistengasse, 4:

ԲԱԶՄԱՎԷՊ. — Ամսագիր Ալգային, Բանասիրական, Գրական, Գիտական. — Հրատարակութիւն Վենետիկի միթթարեանց, — Հրատարակուեցաւ Մարտի թիւը: Տարեկան բաժնեգին 10 ֆր.: Rédaction de la revue «Bazmavep», VENISE (Italie), St. Lazare:

ԵՓՐԱՏ. — Կիսամսեայ հանդէս, Ալգային, գրական, գիտական եւ քաղաքական. — Հրատարակութիւն Խարբերդի Եփրատ քօլէճի ուսուցչութեան: Գաւառաթիւթերու մէջ կարեւոր դիւրը մը ունի իր լուրջ պարունակութեամբ: Հրատարակուեցաւ Բ. տարւոյ թիւ 5ը (Մարտ 15): Տարեկան բաժնեգին 20 ղը: Արտասահման՝ 5 ֆր. կամ 1 տօլար: Հասցէ՝ Խարբերդ, Եփրատ քօլէճ, Կարապետ Մ. Սողիկեան:

ՅՈՎՀԱՆՆԵՍ Գ. ՀԵՌԼԵԱՆ

ԱՏԱՄԱՐԱՌՈՅԻ

(Վկայեալ Կայսերական բժշկական վարժարանէն եւ պատշաճ կազմակերպութեամբ կ'ըստեր սպայից վարժարանին)

Պեւիքաւ, Հայոց Եկեղեցիին ճիշդ դիմացը:

Կը դարմանէ ակոյի եւ լինտերու ամէն տեսակ հիւանդութիւններ. կը շինէ բնականին յար եւ նման ակոյներ քաղցրի կամ ոսկի փշաքի վրայ: Չափէն աւելի փառած ակոյները քաղցրի կ'ընէ. կը շինէ նաեւ dent à pont ամբողջ ոսկիէ կամ քոռալոյնէ:

Հիւանդ կ'ընդունի Դ. եւ Ուր. օրերը առաւօտէն մինչեւ երեկոյ. ուրիշ օրեր իրիկուն ժամը 12էն մինչեւ 3 (Բ. Թ.): Ատկէ դուրս մասնաւոր ժամադրութիւն:

Կիրակի օրերը մինչեւ կէս օր ձրի: